

ցուք առ նա զօրէնսին Մովսիսի՝ սպա-  
նանելով զնա: Եւ չողաւ ելիսոս քահա-  
նայն՝ հմուտ օրինացն, 'ի ցեղէն եղիսա-  
զարու, յազգէ տանն Հեղեայ. և ունէր  
նա մայր՝ 'ի նոյն ազգէ, որ պատուի-  
րեաց նմա և ասէ. Մի հաղորդիր, որ-  
դեակ, խորհրդոց Հրեիցն. քանզի  
պատգամն մարգարէից և առակ օրի-  
նաց, և բանն Աստուծոյ կենդանաւոյ<sup>1</sup>:  
Գնաց ընդ նմա և զունկիանոս կարս-  
նացի. և երթեալ՝ զիպեցան աւուրն  
խաշելութեան: Եւ իրբն պասանիկն<sup>2</sup>  
պնդեաց զեկեսոսն, զմայր իշխոսի ընդ-  
ուսուցց<sup>3</sup> մասն մարգարէութեան՝ որ  
'ի նմա, և ասաց. ի խաղաղութիւն հե-  
թանոսաց՝ թագաւորդ խրայելի, Փրր-  
կիշ աշխարհի. և երիցո, վայ ձեզ՝ սպա-  
նողք արարշին ձերոյ<sup>4</sup>. այլ խնայեա 'ի  
մեզ, տէր Աստուծած մեր: Եւ հանգեաւ՝  
'ի Քրիստոս հաւատացեալ նոյն ժա-  
մայն: իսկ փորանկեալ պատմուճանն  
վիճակաւ հասեալ եղեւ Մշշիթայ Հրէի-  
ցըս. և առեալ իշխոս երեր զնա 'ի  
տուն իւր: Եւ ընդ առաջ երթեալ քոյր

1 Այս է Քրիստոս է պատգամն մարգարէից  
և տուակեան յօրէնս ենիքնին բան Աստուծոց:  
2 Անծանթ է ինձ նշանակութիւնն բանիս,  
զոր անտեղի համարիմ անուս յատուկ առել.  
Նշանակիցէ թերեւս դակէ, և կամ մանաւանդ  
բնեառ, առեալ 'ի յունէն ուշուաչչաւ.

նորա՝ առեալ համբուրէր, և գնէր 'ի  
վերայ լանջացն, և աւանդէր զհոգին՝  
Քրիստոսի, երիս ունելով պատճառ,  
զմահն ջեառն, և զմօրն մահն, և զեղ-  
րօրն միաբանիլն ընդ Հրեսյան: — Եւ  
Աղրիկ էր խագաւոր Վրաց, լուեալ  
պանչացաւ, բայց ոչ կամեցաւ առ ին-  
քըն ունել զպատմուճան մեռելցն. և  
պահեցին զնա 'ի ներքոյ նոճի ծառայն՝  
որ բերեալ էր զտունկ նորա 'ի Լիքա-  
նանէ: Եւ ահա տունն իշխոսի, որ կայ  
յարեմտից Աղողթայ կամրջին,  
իրեն լսէին զպյա ամենայն Հրեապքն՝  
ամաչէին յանձինս իւրեանց, և խոր-  
հեցան քարկոծել զնա. քանզի կորովի  
իմաստութեամբն իւրով 'ի Հին կոտա-  
կարտնաց անտի ծշմարտէր զաստուա-  
ծութիւնն Քրիստոսի, ընդ Հօր և ընդ  
Հոգւոյն փառաւորել: Եւ լուեալ թա-  
գաւորին զաղմնւկ Հրէիցն՝ սաստեաց  
նոցա. և հրամայեաց մի արգելուզ զքա-  
րողութիւնն զոյն յաշխարհէն իւրմէ.  
քանզի լուեալ էր զհրաշչն՝ որ եղէ 'ի  
Հայս և 'ի Հոռոմ:

### 3 Յոր. Ընդ սորոց:

4 Պրասէ Ծարդմանէ. Ես եւից յառաւ. Վա՛յ յեւ,  
և այլի: Բատ Վախութանեայ մարն Խվոսի 'ի  
Մշխեթա կալով՝ լոււաւ զայն թեկաւըցն ըզ-  
Քրիստոս 'ի Խաչն յԵրուսաղէմ, և հաւատաց  
'ի նա:

Ի՞ր շարունակելի.

## Հ Ա. Մ Ա. Ռ Օ Տ Պ Ս Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԱՆՀՆԱՐԻՆ ԿՈՏՈՐԱՇՈՎՎԲ ԱԻԵՐՄԱՆ ՏՓԽԻՍ ՔԱՂԱՔԻ

զոր արար յելուզակօրէն պատերազմաւ Ալա Մէհէմմէտ Խամն, փախուցեալ  
զներունի արքայն Վրաց զՀերակլ Բ, յամի Տեառն 1798.

Յաւուրս թագաւորութեան կոս-  
տանդնուպօլուց Սուրման Ակլիմի Գի,  
և ինքնակալութեան Ռուսաց Ներտա-  
ռինեայ կայսրուհոյն, 'ի չորրորդ ամի  
ազգովին ապստամբութեան Գալղիա-  
ցւոց, Խան ոմն ծեր, որ իշխէր 'ի խո-

րին Պարսիկս 'ի նահանգս ինչ, յա-  
նուն Աղա Մէհէմմէտ Խան ներքինի,  
խորագէտ յոյժ, խորհեցաւ 'ի միտս  
թագաւորել համօրէն Պարսկաստանի  
և անուանիլ Հահ: Ակսաւ ժողովել զօրս  
բազում յոյժ, և կոչեալ զշրջակայ Խանս

Պարսից՝ ընդհանուր իմն ժաղով հաւա-  
քեալ՝ մերկանայր զնորհուրդս սրտին՝  
ճոռոմ ճարտարիսութեամբն ատենա-  
բանեալ, թէ օրինաց կրօնի տարա-  
ծման, և վաղեմի քաջանուն յաղթանա-  
կութեանցն Պարսից համբաւցն, և հա-  
մօրէն երկրին խաղաղութեան և աղ-  
դին փառաւորսութեան՝ միապետու-  
թեամբն իւրով, նորոգման իսկ է վրէժ-  
խնդիր։ Ընդ որ հաճեցեալ ամենե-  
ցուն՝ խոստացան նմա զնապանդու-  
թիւն և զգործակցութիւն յամենայի՛  
՚ի գլուխ տանել զայս խորհուրդ ան-  
վրէպ։ Որոշեցաք ՚ի ժողովի անդ՝ առա-  
քել զղեսպանս առ թագաւորին կոս-  
տանդնութպօլսոյ, և առ կայսրն գերմա-  
նացւոց (գուցէ Գաղղիացւոց), առնուլ  
և ՚ի նոցունց զհաճութիւն։ որոց մինն  
լրիկ ընկալաւ, բայց միայն՝ զի տիրես-  
ցէ բովանդակ վրասանի։ և միւսն եղ  
թէութիւն, զի եթէ գրաւեսէ զբարե-  
լն, անուանեսից Շօ։ Ընկալեալ  
զպատախանիս, իսկ և իսկ ձեռն՝ ՚ի  
գործ էարկ, առաւբելովնախ հատուած  
ինչ զօրաց յարեելս կոյս, և բանակն  
մեծ զնի, գէմ եղեալ՝ ՚ի սահմանս  
Վրաստանի ժամանել, ՚ի հնաղանդու-  
թիւն ածելով զառ ճանապարհին խանս  
զիշխանին Պարսից՝ մինչեւ ՚ի քաղաքն  
Շօ։ ուր Խանն իսպահիմ, զի բարե-  
կամ էր Հերակլի վրաց արքային, ՚ի զի-  
մի հարեալ առաջապահ զօրացն՝ վաս-  
տակեցոյց զնոսա յոյժ, մինչեւ թողեալ  
զնա զօրացն անցին ՚ի Վիրս կոյս, զի  
նուաճեալ զսա, զիւրաւ ապա տիրել  
ունին և նմա։ Եւ ՚ի ժամանեն զօրացն  
մերձ ՚ի սահմանս վրաց, զեսպան ա-  
ռաքեցին առ Հերակլ՝ պահանջելով  
զհնաղանդութիւննորա և զպատանդ,  
և զհարկո յամենայնէ, որպէս զի այս-  
պիսի հպատակութիւն սորին հաստա-  
տեսյէ զշահութիւնն ներբինւոյն բաց-  
ասական պատախանեաւ յետս դար-  
ձոյց զղեսպանն՝ արքայն Հերակլ, և  
ըսր ՚ի Մօզոօդ առ զօրապետն Շու-  
սաց փութեցւոցանէր՝ յօգնութիւն  
իւր ժամանել. զի կայսրուհին կացու-  
ցեալ էր անդ զօրս քսան և հինգ հա-

զարաց՝ ՚ի պահպանութիւն վրաստա-  
նի, սպասել ազգարարութեան վրաց։  
Որում փոխսնակ զօրաց՝ պատախանի  
առաքեաց զօրապետն Շուսաց, թէ մի  
զանդիտեր ՚ի նմանէ վիսաս ինչ կրել, և  
թէ պատրաստ եմ զօրոքս ժամանել,  
միայն սպասեմ ահա յարբունուստ  
անդրէն հրամանազրի, (քանդի նախա-  
պաշարեալ էր զնա ներբինին՝ պատ-  
ճառանօք այցելութեան սահմանակից  
քաղաքացն, որոց նախնիք իւր եր-  
բեմն տիրէին. ստացեալ ևս էր, ասեն,  
ընծայիք զգօրապետին սիրտ, կամ  
խորհրդով իմն գուցէ թոյլ տուեալ սա  
նմա՝ նուաճել զշերակլ, և յափշտա-  
կել զվրաստան, զի ապա ինքն եկեալ  
և հալածեալ զներբինին՝ գրաւեսցէ  
իրաւամիք զլրաստանն ողջոյն, որպէս  
եղի իսկ)։ Զայս պատախանի առեալ  
անօգնական ծերունոյն Հերակլի, վհա-  
տցաւ, զի անպատրաստ զտաւ զօրա-  
ժողովն լինելց՝ յուսով պատրաստա-  
կան զօրացն Շուսաց։ ապա կոշեաց  
յօգնութիք զփոքր Վրաց իշխանն Զաշխ-  
իրպաշու զվաղոմն, որ հապճեպ զեր-  
կոստասան հազարս արանց առեալ փու-  
թացաւ ՚ի ծփիսին. որում ընդառաջ ել  
Հերակլ մեծաւ հանդիսի, ընկոլաւ ՚ի  
քաղաք իւր։ Եւ այն ինչ մերձեցաւ  
լուր թշնամեացն, ահա մեասասն հա-  
զորեն զօրաց Սաղոմնին ՚ի փախուստ  
ցրուեցան, և մնաց հազար միայն։ իսկ  
Հերակլեանին, երկու հազարք, մետա-  
սան եեթ եւրոպացի թնդանօթզք, ե-  
րեքհարիւր արտեստաւորք, և երկո-  
տասան կառավարչօք, և երկորումքք  
վարժա առաջին և երկորդ սպարապե-  
տօք, անուն առաջնոյն գարբիկլ մեծա-  
ւոր, և երկորորդին գէորդ մեծաւոր.  
սոքք միայն ել Հերակլ և զնաց զնա-  
նապարհ աւուրց երից, ունել զկիրճ  
մոփի թշնամեացն, և բանակեցաւ անդ՝  
սպասելով Մօզոօդեան զօրացն ժամա-  
նելցոյ։ Եւ մնացեալ զտուրս վիշտա-  
սան, ստուգեաց ՚ի լրտեսաց զմերձե-  
նալ թշնամեաց մեծի բանակին, որում  
հրամայէր ներբինին։ Ժանեաւ և զմիա-  
քանիին ընդ սմա՝ երկոցուն խանիցն

Այրարատեան գուառին, և կէնճէու։  
Հաւատայ և Մելիք Մէճնունի, ընդ ո-  
րոց բարեկամէր, և օգնութեան նոցին  
յուսայր՝ Սորա ընդ ժամանել ներքի-  
նույն զօրօք 'ի կէնճէ, (կամ առ երկիւ-  
ղի, և կամ առ ջին մօխտեացն՝ որ առ  
Հերակլ), ելին ընդ առաջ նորա, դա-  
շինս կռացին հպատակութեան, և միա-  
բանեցան ընդ նմա՝ բնածինչ 'ի վրաց  
զկլրաստան կացուցանել։ Ապա ժողո-  
վեալ և սոցա զբազմութիւն զօրաց՝  
ասպատակ հանէին, և բանակն մեծ  
խաղայր ժամանել 'ի սահմանն։ Զայս  
ամենայն լուեալ անզօր ծերունւցն Հե-  
րակլի, և զզօրացն թշնամեաց յոզնա-  
թիւ բազմութիւն, տեղի ետ, և խաղա-  
ցոյց զայքատին բանակ իւր ընդ կրուն-  
կըն, և եհաս յեղերս այդեստանեայցիրը  
կէս փարսախուա հեռի 'ի քաղովքէն  
իւրմէ։ Ապա և թշնամեացն անարգեկ  
մոտեալ ընդ կիրճն յերկիրն, բանակե-  
ցան 'ի գաշտին Սոզանլըն անուանեալ  
գեղջ. և կարգեաց ներքինին զզօրս իւր  
զասս դասս, և զաւաշեաւ առաքեաց  
զօրապետ մի քաջ չորս հազոր ա-  
րամբք՝ վաստակիցուցանել զքաջանուն  
զանպարտելին Հերակլ որպէս զի դիւ-  
րաւ մարթացի ապա ինքն յաղթել  
նմա։ Լուեալ զայս ամենայն բնակլաց  
քաղաքին՝ սասանեցան, բքան, լուծան,  
և կարօղքն՝ էր որ հեծեալ, և էր որ  
հետի, խոյս ետուն 'ի լեռնակողմն կով-  
կասու, զանձինս ապրեցուցանել. (որոց  
պատահեալ՝ փախստեայ մետասան  
հաղարայն Սոզոմոննեան գաղթնլոց,  
կողպատեցին մերկացին զնասա փոխա-  
նակ օգնելց, և փախեան)։ Հասեալ  
թշնամեացն յայնկոյս այդեստանկացն,  
յարձակեցան 'ի վերայ սակաւաթիւ-  
բայց հաւատարիմ զօրացն Հերակլեայ,  
և ժամն չորս պատերազմեալ՝ մեծ մասն  
զօրաց թշնամեաց զիամթաւալ 'ի թընդ-  
անօթացն հերակլեանցն կործանէին.  
օրինակ իմն իբրև 'ի հասու մանդա-  
զացն քաջաշարժ հնազողաց, շեղաշեղ շրջեալ,  
զիտապաստ գիզանէին յե-  
րեսս երկրի։ Զոր տեսեալ մնացորդացն՝  
բքան, պարուսեցան, և փախուցեալ

յերեսացն վլրաց, անկան 'ի բուն բա-  
նակն բոնաւորին, այնպիսի իմն խոռո-  
վացոյզ տրտունջ բարձեալ զնմանէ, մին-  
չե սակաւէկ միւս ես, և մոտանէր երկ-  
պատակութիւն 'ի բանակ անդք, իսկ  
բանաւորին առժամացն հասեալ 'ի վե-  
րայ, շիջուցանէր, խաղաղէր, քաջալե-  
րէր զնոսա, և խրախուսէր զամենեսին  
'ի ստացումն աւարից և գերեաց. և  
զբուն բանակն ողջոյն յառաջ խաղա-  
ցուցանէր. և ընդ ստուօտն ժամանեալ  
յանդիման աղքատին զօրաց և թնդա-  
նօթացն վրաց, սկիզբն առնէր մար-  
տին. Եւ մինչև ցկէս օր հրացանս առ  
միմեանս՝ կոյր զկուրայն արձակէին, զի  
մառախլապատ էր երկիր. ապա 'ի մեր-  
ժել միզին յարեկելան հողմոյն՝ աշ-  
ամբարձեալ տեսին զսակաւոր զօրս  
վրաց՝ քաջալերեալ զօրացան, և սոքա  
'ի նոսին հայեցեալ յանթիւ բազմու-  
թիւն (որք էին իբր ուժուուն հազար  
արանց) պարաւասեալ բքան։ Իսկ բըռ-  
նաւորն ներքինի, որ 'ի վերայ լերին  
կացեալ՝ դիտակն 'ի ձեռին՝ զօրացն  
հրամայէր. հայեցեալ և յայնկոյս քա-  
զափին՝ տեսանէր զմանկունս կանայս՝  
և զաղիկունս բնակչաց, որք իբր 'ի սառ-  
նամանեաց վարեալ փոխորկէ՝ ձիւնա-  
թաթաւ իմն զլիսովք զեղեալ 'ի գաշ-  
տին, համակ սպիտակ երեեցուցանէին  
զայն վայր ընդարձակ. Ապա նորոգ  
խրախոյս տու իւրսն բառնայր, փութալ  
զրաւել զքաղաքին, և զօրէն բազէից  
յայն որս աղաւնեաց խոյանալ. Քաջա-  
լերեալ զօրացն՝ և ևս սաստկացուցա-  
նէին զպատերազմն յոյժ, մինչև Հե-  
րակլ թէպէտ և բազում արութիւնս  
քաջութեան յուցեալ էր անդ, հայե-  
ցեալ թէ յոյժ սակաւ մնացին իւրքն,  
խորհեցաւ ապրեցուցանել զանձն, և  
խոյս ետ յայուր յամուր բերդ իւր  
անկանել. և մինչև էր ժամանեալ 'ի  
բաղանեաց դուռն, ահա հատուած ինչ  
թշնամեաց այրուծից զիետ պնդէին  
կենդանւոյն ձերբակալել զնա. զոր  
տեսեալ 'ի քաջապէն, ուղղեցին զթընդ-  
անօթս 'ի հետամուտս, ոչ թողացու-  
ցանէին ժամանել առ նա, մինչև զեր-

ծուցեալ եհասս՝ ուր դէմ եղեալն էր։ Արդ պատերազմն ընդ թնդանօթից դօրանայր, և արուեստաւորացն զօրութիւն նուազէր, մինչև տիրեալ սոյա երիւղ տագնապի, 'ի փախուստ նեպէին թողեալ զդործիս, և մասցին միային առաջին և երկրորդ սպարապետք երկոքին, որք և ևս արիաբար վարեալ զթնդանօթմն՝ զբազումն թշնամեաց տապաստ արկանէին. բայց սպարապետն 'ի հրացանիցն թշնամեաց 'ի մահ վիրաւորեալ, մնաց առաջինն միայն. որ և զվերջին ճիզն 'ի գործ եղեալ արիաբար, բազում կոտորածս արար գընդակօք. ապա 'ի կողմանց յարձակեալ 'ի վերայ բազմութիւն թշնամեացն, կենդանւոյն կալան զնա, և չարաշար սպանին զնա։ Տեսեալ Սալոմննի, եթէ մատնեցու քաղաքն, փախստական մարափւ ճողովրեցաւ յերկիր իւր. ընդորում մարթացաւ զերծանելնժդէհացեալն անդ՝ ականատես պատմիչս անցիցս, ուր զբաց։

Ապա տեսեալ թշնամեաց զբազաքն թափուր 'ի պաշտպանողաց, գրոհ սուեալ դիմեցին առ հասարակ, և մոտեալ հարին կոտորեցին, և ապա յաւար հարկանէին զոր ինչ և գտանէին. տանջէին նաւթեայ հրով զեկեցցականս և զծերս քաղաքին՝ յայտնել զինչս գաղեալս։

Գերեցին զմանկամարդս, զկանայս, զդստերս և զմանկունս՝ զրոս 'ի քաղաքին և զորս 'ի զաշտին ցրուեալս, և զբազումն 'ի ծերոց սրոյ ճարակ ետուն։ Զարքունիս, զեկեղեցիս և զվա-

Զարչարէին սպանանէին առաւել ևս զդենակիցս իւրեանց զմահմետական բերդարնակուն անդ, յաւար և 'ի գերաժիւն մասնեալ. Այս ամենայն գործ կաստրեցաւ 'ի մէջ աւուրց ֆսանից։

'ի վախճանի 'ի թիւ արկեալ զմեռեալս վրաց թէ 'ի պատերազմի և թէ 'ի կոտորածի աստ գտին իրբ յիսուն հազարաց, և գերեալք բազումն կացեալ անդ քաղաքաւեր բռնաւորին իրբեւ ամիսս երիս, և լուեալ զիսազալ զօրացն իտուաց քսան հազարաց ընդ Ալանաց գուռն՝ դէպ առ Պարսկաստան, և երեք հազարաց՝ դէպ առ ինքն, ինքնահամած եղեւ համայնիւքն, թուղեալ զջիկիս քաղաք աւերակ, խոճալի մերկ ապրեցելովքն։ Ուր գարձ արար ապա Հերակլ արքայ, և սուդ մեծ էաու 'ի վերաց աւերածոց քաղաքին, և կոտորելոցն։ Վախճան սահմանակցացս խռովութեանց եղեւ այս, զի։

Ոմ եւար զաւար, ոմ եզկ թշուառ,  
Եւ այլուր տուր՝ եառ զայն գաւառ։  
Միան մեց վայ մեռելոց,  
Եւ գերելց սառապելոց։

Գրեցաւ 'ի Տիկիս Փայտակարանի 'ի մազապուր զերծելոց, յամի Տիեառն 1796 յունիսի, ընդարձակութեամբ բառից յաճախութեան։

Յորմէ յապաւելով իմն 'ի խիտ առխիտ տերնոց բազմակոյտ բառից՝ զպըտուր պատմութեան 'ի լոյս արևու հուլանեալ, վերծանողացն մտաց հասու գործել կամեցեալ, համառօտեցաւ 'ի յԱր՝ 'ի կոստանդնուպօլիս, 1796 յունիսի։

Ցիւտակադր ԱՄ

